



0004, Երևան, Ա.Բաբաջանյան փող., 93 շենք, բն. 11: էլ.փոստ. [movarist@yahoo.com](mailto:movarist@yahoo.com), Հեռ. +374 10(95) 72.53.60, (095) 51.76.95  
93, Babajanyan Street, apt. 11, Yerevan 0004, Armenia. e-mail: [movarist@yahoo.com](mailto:movarist@yahoo.com), Tel. +374 10(95) 72.53.60, (095) 51.76.95  
0004, г.Ереван, ул. А.Бабаджанияна, зд.93, кв. 11, эл.почта: [movarist@yahoo.com](mailto:movarist@yahoo.com), Тел. +374 10(95) 72.53.60, (095) 51.76.95  
N Ա/Հ 24 մայիսի 2024 Ձեր, На Ваш, Yours ..... N W/N 24, May 2024

## Կ Ա Ր Ծ Ի Ք

### **Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպությունը ուսումնասիրել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ ՎԻՎՕ Նախագիծ) և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծերի Փաթեթ) վերաբերյալ» ՀՀ արդարադատության նախարարության կողմից օրինագծերի հանրային քննարկումների պաշտոնական կայքէջում տեղադրված [տարբերակը](#), ինչպես նաև մասնակցել է նշված օրինագծերի 2024 թ. մայիսի 17-ին կազմակերպված [հանրային քննարկմանը](#) և ներկայացնում է հետևյալը:

Նախ, կազմակերպությունը ողջունում է նոր ՎԻՎՕ և դրան հարակից օրենքների փաթեթի փոփոխությունների ու լրացումների հերթական փորձը, ինչն սկիզբ է առել դեռևս 2012 թվականին՝ ՀՀ նախագահի «Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրությամբ, որի շրջանակներում ի թիվս այլ միջոցառումների նախատեսված է եղել նաև **ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի (ՎԻՎՕ) մշակումը:**

Այդ տարվանից ի վեր 12 տարի շարունակ ծախսվել են բյուջետային և զարգացման գործընկերների վարկային ու դրամաշնորհային հսկայական՝ մի քանի տասնյակ միլիոն ԱՄՆ դոլարի հասնող, միջոցներ, սակայն ցավոք խնդիրը դեռևս

մնում էր չլուծված: Խնդրի չլուծումն, ըստ մեզ, պայմանավորվում էր հաճախակի փոփոխվող ՀՀ արդարադատության նախարարների քաղաքականությամբ կամ քնահաճույքով, օրվա իշխանությունների ոչ բավարար ռազմավարական մտածողությամբ ու շահագրգռության պայմաններում: Դրա վառ վկայությունն է այն հանգամանքը, որ այդ տարիների ընթացքում այդ ոլորտի պատասխանատու բազմաթիվ նախարարները բավարար չափով ականջալուր չեն եղել ՎԻՎՕ փոփոխությունների վերաբերյալ քաղաքացիական հասարակության բազմաթիվ առաջարկություններին (այդ թվում մեր կազմակերպության կողմից ներկայացված 2017 թ. հոկտեմբերի 30-ին, 2018 թ. մայիսի 24-ին, 2023 թ. հունիսի 16-ին, ՀՀ ԱՆ հանրային քննարկումների պաշտոնական կայքէջում կազմակերպված հանրային քննարկումների ժամանակ) և շարունակել են դա շուրջ 40 տարի շարունակ օգտագործել ՀՀ իրավակիրառ պրակտիկայում: Մինչդեռ դրանում առկա էին բազմաթիվ իրավական կարգավորումներ, որոնք հղում էին տալիս նախկին **ԽՍՀՄ օրենսդրությանը, սոցիալիստական սեփականությանը, սոցիալիստական իրավագիտակցությանը** և այլն և ըստ այդմ էլ **ՀՀ վարչական մարմիններն ընդունում էին ի սկզբանե առոչինչ վարչական ակտեր՝** ուղղված անկախ Հայաստանի ֆիզիկական ու իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությանը, և որոնց **բողոքարկումը անկախ Հայաստանի դատարաններում** առաջացնում էր նախ այդ անձանց կողմից անհարկի նյութական ու ոչ նյութական (բարոյական) վնասների, ապա՝ դատարանների նկատելի ծանրաբեռնվածությանը:

Միաժամանակ, վարչական իրավախախտումներն ու դրանց վարչական վարույթը կարգավորող օրենսդրության մեջ տեղ էին գտել այլ լուրջ բացթողումներ, որոնք խիստ բացասաբար էին անդրադառնում ինչպես մարդու իրավունքների և ազատությունների և իրավաբանական անձանց օրինական շահերի պաշտպանության երաշխավորվածության, նշված ոլորտում պետական կառավարման, ինչպես նաև վարչական զանցանքների վերաբերյալ գործերով արդարադատության իրականացման արդյունավետության վրա: Այդ օրենսդրության հիշյալ բացթողումների պարագայում **իրավասու պաշտոնատար անձինք հաճախ ղեկավարվում էին ոչ թե կոնկրետ իրավական դրույթներով, այլ՝ հայեցողական որոշումներով:** Մտահոգող էր նաև այն, որ վարույթի համար սահմանված **բազմաթիվ անհարկի առանձնահատկությունները գործնականում խիստ բարդացնում էին գործառույթների իրականացման բնականոն ընթացքը**, անխուսափելի դարձնում անհարկի ֆինանսական և մարդկային ծախսեր պահանջող յուրաքանչյուր ոլորտին համապատասխան մասնագիտական լրացուցիչ պատրաստվածություն անցնելու անհրաժեշտությունը և այլն: Այսպիսի

հանգամանքներում իրավասու պաշտոնատար անձինք չէին պահպանում վարչական վարույթի սահմանված իրավակարգավորումները, գերազանցում էին իրենց տրված հայեցողական ազատությունները, ինչի արդյունքում ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, անկախ մարմինների համակարգերի աշխատակազմերում բացակայում էր պատշաճ վարչական վարույթի մշակույթը:

Արդյունքում ունենալով նաև էին ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատշաճ վարչարարության ու արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, ինչը հանգեցնում էր վարչական կոռուպցիայի ընդլայնմանը՝ որպես համակարգային կոռուպցիայի նոր գործիքի:

Վերոհիշյալի համատեքստում գտնում ենք, որ շրջանավոր Նախագծերով փորձ է կատարվել վերացնել ՎԻՎՕ և հարակից օրենքներում առկա վերոնշյալ բացթողումները, իրավական որոշ անհամապատասխանությունները (կոլիզիաները), իրացնել ՎԻՎՕ Նախագծի հիմնական նպատակը, այն է՝ բոլոր վարչական իրավախախտումները և դրանց համար նախատեսված վարչական տույժերը նախատեսել մեկ օրենսդրական ակտում, վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը համապատասխանեցնել գործող հասարակական հարաբերություններին և իրավական համակարգին, ինչն արժանի է դրական գնահատականի:

Միաժամանակ, ցանկանում ենք նշել, որ այդ օրինագծերով դեռևս բավարար լուծում չեն ստացել դրանց շրջանավոր հիմնավորման բոլոր նպատակադրումները, շատ հաճախ կատարվել են շեղումներ դրանցից, հաշվի չեն առնվել ՀՀ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների բազմաթիվ առաջարկությունները, որոնք անշուշտ կլավարկեին ՎԻՎՕ-ն և հարակից օրենքները: Ավելին, այդ օրենքները չէին դառնա ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձանց անհարկի պատժի ու «տուգանքի մատերիալի» գործիքներ, այլ կդառնային իրավախախտումների կանխարգելման, վարչական պատշաճ մշակույթի իրականացման ու զարգացման, իրավասու անձանց կողմից վարչական կոռուպցիայի բացառման և հայեցողական իրավունքի չարաշահման կանխարգելման, ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավագիտակցության մակարդակի բարձրացման կարևորագույն գործիքներ, վերջիններիս սահմանադրական իրավունքների իրացման լավագույն միջոցներ:

Այսպիսի արդյունքի կարող էին հասնել միայն այն դեպքում, երբ շրջանառվող օրինագծերի հանրային քննարկման կազմակերպման ուղղությամբ պատասխանատու մարմինների կողմից կատարվեին **ակտիվ ջատագովության աշխատանքներ** և ոչ թե դրան վերբերվեին որպես հերթական հասարակ պաշտոնեական գործառույթի:

Այսպես, շրջանառվող նախագծերի՝ ՎԻՎՕ նոր նախագծի, դրան կից 36 օրենքների նախագծերի և դրանց հիմնավորման (որոնց ծավալը կազմում է 840 թերթ) հանրային քննարկման համար նախատեսված է եղել սոսկ օրենսդրությամբ սահմանված 15 օր, ինչն ընթացել է 2023թ. սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 05-ը: Ընդ որում, այդ քննարկման մասին բավարար գովազդային տեղեկատվություն չի տարածվել հանրային հաղորդակցման միջոցներով (հանրային հեռուստատեսություն, ռադիո, լրատվական այլ միջոցներ) և դրանում չեն ներգրավվել քաղաքացիական հասարակության լայն շերտեր: Ըստ հանրային քննարկման [տեղեկատվության](#) այդ նախագծերի հանրային քննարկման **այցելուները եղել են սոսկ 3163 անձ և առաջարկություն է տվել միայն մեկ կազմակերպություն՝** «Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը»: Ընդ որում, այդ կազմակերպության 5 իրավաչափ և ողջամիտ առաջարկություններից՝ ուղղված ՀՀ ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատասխանատվության համաչափության ապահովմանը, ընդունվել է սոսկ մեկը՝ կիրառվող սանկցիայի խստացման վերաբերյալ:

Հատկանշական է, որ օրինագծերի հանրային քննարկումի ավարտից հետո՝ 05.10.2023 թ. անգամ, անցած 7 ամիսների ընթացքում ՀՀ ԱՆ-ն՝ որպես օրինագծերի հեղինակ, քայլ անգամ չի կատարել դրանք հանրայնացնելու, ջատագովելու ուղղությամբ: Այդպիսի պասսիվ գործունեության արդյունքում ՀՀ ԱՆ կողմից 2024 թ. մայիսի 17-ին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպված օրինագծերի հանրային [քննարկմանը](#) մասնակցում էին ՀՀ արադարադատության նախարարության համակարգի 8 և զարգացման գործընկերների 4 ներկայացուցիչներ, և **քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ընդամենը 8 ներկայացուցիչներ:** Հանրային քննարկմանը **չէր մասնակցում զանգվածային լատվության ոչ մի ներկայացուցիչ:** Հանրային քննարկման այսպիսի իրավիճակը վկայում է **կառավարություն-քաղաքացիական հասարակություն կառուցողաան համագործակցության խիստ թույլ կապի մասին, ինչը ժողովրդավարական հորջորջվող երկրում կարիք ունի լուրջ զարգացման և ամրապնդման՝ փոխադարձ վստահության բարձրացման և կառավարության կողմից քաղաքացիական**

հասարակական կազմակերպությունների հզորությունների զարգացման, նրանց հանրային քաղաքականությանը մասնակից դարձնելու գործելակերպի ընդլայնման և իր լիազորությունների մի մասի պատվիրակմանը քաղաքացիական հասարակության կազմակերպություններին:

Բացի վերոհիշյալից քննարկվող Նախագծերում տեղ են գտել մի շարք հետևյալ բովանդակային բացթողումները.

1. այսպես, թեև ՎԻՎՕ նախագծով կարևորագույն լուրջ առաջընթաց է ձեռք բերվել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության սուբյեկտներ դասելու իրավակարգավորումների կանոնակարգման ուղղությամբ, որոնցով հստակեցվել են վարույթին առնչվող իրավական նորմերը, ոլորտում ծագող հարցադրումներին ամբողջական լուծում տալու դրույթները, այդուհանդերձ, դրանցում կան իրավակարգավորումներ, որոնք հակասում են ՎԻՎՕ նախագծի սկզբունքներին և դրա հիմնավորման մեջ ներկայացված հիմնավորումներին: Մասնավորապես, ՎԻՎՕ Նախագծի «**իրավաբանական անձի վարչական պատասխանատվությունը**» 16-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված է, որ «5. Սույն հոդվածը չի տարածվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կառավարման համակարգի մարմինների, Կենտրոնական բանկի վրա:»:

Ըստ մեզ այսպիսի կարգավորումը **ակնհայտորեն հակասում է ՎԻՎՕ Նախագծի.**

➤ «**Խտրականության արգելքը**» 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարևորագույն սկզբունքին, այն է՝

**«2. Վարչական իրավախախտում կատարած իրավաբանական անձը ենթակա է վարչական պատասխանատվության անկախ գտնվելու վայրից, կազմակերպական-իրավական ձևից, հիմնադիրների (մասնակիցների) իրավական վիճակից կամ գտնվելու վայրից, իրականացվող գործունեության տեսակից, նպատակներից, խնդիրներից կամ այլ հանգամանքներից:»**,

➤ «**Վարչական պատասխանատվության սուբյեկտները**» 14-րդ հոդվածի համապատասխան իրավակարգավորումներին,

2. թեև ՎԻՎՕ նախագծի «Ֆիզիկական անձի վարչական պատասխանատվությունը» 15-րդ հոդվածի 4-6 մասերով կանոնակարգված են պաշտոնական անձ հանդիսացող ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության դրույթները, այդուհանդերձ ինչպես ՎԻՎՕ նախագծով, այնպես էլ ՀՀ համապատասխան օրենսդրությամբ նախատեսված չեն **պաշտոնեական կամ ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցված նյութական և ոչ նյութական (բարոյական) վնասի փոխհատուցման հստակ մեխանիզմները: Թեև դրանք ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում, սակայն դրանք հստակ չեն և իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են լուրջ խոչընդոտների:**

**Հետևապես առաջարկում ենք ՎԻՎՕ նախագծում ներառել այնպիսի կարգավորումներ, որոնք կփոխլրացնեն կամ կհստակեցնեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում ներկայացված իրավակարգավորումներն՝ ուղղված պաշտոնեական կամ ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցված նյութական և ոչ նյութական (բարոյական) վնասների փոխհատուցմանը: Ընդ որում, այդ վնասի հատուցմանը պետք է ուղղվեն իրավախախտում թույլ տված անձի աշխատավարձի և/կամ պարգևատրության միջոցները, պետք է սահմանվեն աշխատավարձի չափի նվազեցման, պարգևավճարից զրկման, ընդհուպ մինչև զբաղեցրած պաշտոնի կարգավիճակի նվազեցման, աշխատանքից ազատման սանկցիաներ:**

**Հենց այս իրավակարգավորումների արդյունքում միայն հավանաբար արմատախիլ կարվի համակարգային կոռուպցիայի ներկայումս լայնորեն տարածված տարատեսակը՝ վարչական կոռուպցիան,**

3. վերոհիշյալի համատեքստում խիստ մտահոգիչ ենք համարում, որ շրջանառվող Նախագծերի Փաթեթի մեջ ներառված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքում կատարել սույլ 1

փոփոխություն, այն է՝ **օրենքի 8-րդ հոդվածում «չափավոր» բառը փոխարինել «համարժեք» բառով:**

Ըստ մեզ այսպիսի մոտեցումը չի համապատասխանում ՎԻՎՕ նախագծի հիմնավորման մեջ հայտարարված նպատակադրումներին և ըստ այդմ պետք է նախաձեռնվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում առավել լուրջ փոփոխություններ և լրացումներ կատարելու լրջագույն աշխատանք, որի շրջանակներում հաշվի կառնվեն նաև քաղաքացիական հասարակության մասնագիտացված կառույցների առաջարկությունները և նրանք նույնպես կներգրավվեն այդ կարևորագույն գործընթացի մեջ,

4. թեև ՎԻՎՕ նախագծի «**Իրավաբանական անձի վարչական պատասխանատվությունը**» 16-րդ հոդվածում կանոնակարգված են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության դրույթները, այդուհանդերձ ինչպես ՎԻՎՕ նախագծով, այնպես էլ ՀՀ համապատասխան օրենսդրությամբ նախատեսված չեն **իրավաբանական անձանց կողմից պաշտոնեական կամ ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում ՀՀ Ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցված նյութական և ոչ նյութական (բարոյական) վնասի փոխհատուցման հստակ մեխանիզմները: Թեև դրանք ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում, սակայն դրանք հստակ չեն և իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են լուրջ խոչընդոտների:**

**Հետևապես առաջարկում ենք ՎԻՎՕ նախագծում ներառել այնպիսի կարգավորումներ, որոնք կփոխլրացնեն կամ կհստակեցնեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում ներկայացված իրավակարգավորումներն՝ ուղղված իրավաբանական անձանց կողմից պաշտոնեական կամ ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում ՀՀ Ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցված նյութական և ոչ նյութական (բարոյական) վնասների փոխհատուցմանը: Ընդ որում, այդ վնասների հատուցմանը պետք է ուղղվեն իրավաբանական անձի աշխատավարձի և/կամ պարգևատրության ֆոնդերի միջոցները:**

**Հենց այս իրավակարգավորումները կլրացնեն նախկին մեր առաջարկությունը և հավանաբար կնպաստեն համակարգային կոռուպցիայի ներկայումս տարածված տարատեսակի՝ վարչական կոռուպցիայի, արմատախիլ անելուն և/կամ կրճատելուն:**

5. Ըստ մեզ ինչպես ՎԻՎՕ նախագծի, այնպես էլ՝ Նախագծերի փաթեթի մեջ դեռևս վերջնական լուծում չեն ստացել դրանց հիմնավորման մեջ ներկայացված մտահոգությունը՝ այն է՝ ***վարչական պարասխանատվության վերաբերյալ օրենսդրությունում առկա են միջազգային իրավական չափանիշներին ակնհայտ հակասող փարաբնույթ ինստիտուտներ, որոնք հարկ է լինում վերացնել նաև միջազգային իրավասու կառույցների միանգամայն իրավաչափ միջամտության արդյունքում (դրանք վերաբերում են հատկապես վարչական կալանքին ու ձերբակալությանը):*** Ընդ որում, այդպիսիք գործում են նաև ներկայումս,

6. Վերոհիշյալ կետի բովանդակությանը համապատասխան **միջազգային իրավունքի ու փորձին շատ հաճախ հակասում են ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների մասին օրենսդրական կարգավորումները**, որոնք մանրամասնորեն ներկայացված են ՀՀ արդարադատության նախարարությանը 2023 թ. հունիսի 16-ին ուղղված «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՒԽՁԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**» մեր համառոտ վերլուծության մեջ (կցվում է): Այդպիսի իրավակարգավորումներից են.

- **ավտեմեքենա վարելու վկայական չունենալու համար վարչական պատասխանատվության դրույթները, որոնք տարածվում են վարորդական իրավունքի վկայական ստանալու համար տեսական քննությունն անցած և գործնական քննությանը նախապատրաստվող վարորդի թեկնածուներին,**
- **վարորդական իրավունքի վկայական ստանալու համար տեսական քննությունն անցած և գործնական քննությանը նախապատրաստվող վարորդի թեկնածուներին ֆիզիկական անձանց կողմից գործնական քննությունների հանձնման նպատակով անցկացվող վարելու գործնական պարապմունքների օրենքով սահմանված իրավական ակտերի բացակայությանը,**



- վարորդական իրավունքի վկայական ստանալու համար տեսական քննությունն անցած և գործնական քննությանը նախապատրաստովող վարորդի թեկնածուներին **մասնավոր անձանց կողմից գործնական պարապմունքներ անցկացնող անձանց վարչական պատասխանատվությանը,**
- ճանապարհային երթևեկության կանոնների խախտման միևնույն դեպքի համար պատասխանատվության 1-ից ավելի սանկցիաների կիրառմանը, ինչը հակասում է հենց ՎԻՎՕ նախագծի 10-րդ հոդվածով նախատեսված **«Նույն արարքի համար կրկին վարչական պատասխանատվության ենթարկելու անթույլատրելիությունը»** սկզբունքին: **Դա հատկապես վերաբերում է միևնույն իրավախախտման համար տուգանքի նշանակման և բալերի հանման սանկցիաների համադրությանը**
- և այլն:

7. Ըստ մեզ ինչպես ՎԻՎՕ նախագծի, այնպես էլ՝ Նախագծերի փաթեթի մեջ դեռևս վերջնական լուծում չեն ստացել դրանց հիմնավորման մեջ ներկայացված մտահոգությունն առ այն, որ ***Օրենսդրության մեջ տեղ գտած լուրջ բացթողումները խիստ բացասաբար են անդրադառնում ինչպես մարդու իրավունքների և ազատությունների և իրավաբանական անձանց օրինական շահերի պաշտպանության երաշխավորվածության, նշված ոլորտում պետական կառավարման, ինչպես նաև վարչական զանցանքների վերաբերյալ գործերով արդարադատության իրականացման արդյունավետության վրա: Բնորոշ է, որ օրենսդրության հիշյալ բացթողումների պարագայում իրավասու պաշտոնատար անձինք հաճախ ղեկավարվում են ոչ թե կոնկրետ իրավական դրույթներով, այլ՝ հայեցողական որոշումներով: Մտահոգող է նաև այն, որ վարույթի համար սահմանված բազմաթիվ անհարկի առանձնահատկությունները գործնականում խիստ բարդացնում են գործառույթների իրականացման բնականոն ընթացքը, անխուսափելի դարձնում անհարկի ֆինանսական և մարդկային ծախսեր պահանջող յուրաքանչյուր ոլորտին համապատասխան մասնագիտական լրացուցիչ պատրաստվածություն անցնելու անհրաժեշտությունը և այլն:***

Այսպիսի իրավիճակի պատճառն ըստ մեզ «Հայրենիքը պետությունն է», «Պետությունը օրվա իշխանություններն են», «Պետությունը իշխող քաղաքական

մեծամասնությունն է» **ապագային ու հակապետական հայեցակարգերն են**, որոնց արդյունքում.

- ՀՀ գործող սահմանադրությամբ երկրի ընդերքի ու այլ բնական հարստությունները համարվել են պետության սեփականություն և ոչ թե ԺՈՂՈՎՐԴԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խորհրդարանի կայուն մեծամասնության նորմը դարձել է **2018 թ. իրադարձություններից հետո համակարգային կոռուպցիայի նորահայտ հեղափոխական դրսևորման՝ օրենսդրական կոռուպցիայի, լայնածավալ կիրառմանը,**
- ՀՀ արժանապատիվ քաղաքացիներն ու օրինապահ իրավաբանական անձինք դարձել են **«տուգանքի մատերիալ», անալոգիայով՝ «իրավախախտման մատերիալ»,**
- վարչական վարույթի իրավունք ձեռք բերած հանրային աշխատողները դարձել են ՀՀ արժանապատիվ քաղաքացիներն ու օրինապահ իրավաբանական անձանց անվերահսկելի և պատասխանատվության ոչ ենթակա «պատժիչ ջոկատների», ինչ **արդյունքում երկրում 2018 թ. իրադարձություններից հետո ծաղկում է համակարգային կոռուպցիայի նորահայտ հեղափոխական տարբերակներից մեկը ևս՝ վարչական կոռուպցիան:**

8. Վերոհիշյալի համատեքստում մտահոգություններ են առաջացնում նաև.

- 1) Վարչական իրավախախտման մասին իրազեկման (ծանուցման) **իրավակարգավորումների հակասահմանադրականությունն ու ոչ իրավաչափությունը:** Այսպես, խիստ տարակարծությունների տեղիք են տալիս ՀՀ գործող ՎԻՎՕ 283-րդ հոդվածով եւ դրան համապատասխան ՎԻՎՕ նոր նախագծի 133-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումները **Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում փաստաթղթերը հանձնելու (ծանուցելու) վերաբերյալ: Դրանցից մի քանիսն ուղղակի համասահմանադրական են:** Այսպես,

- մեր դիտարկումները ցույց են տալիս, որ ՀՀ փոստային բաժանմունքների վատ աշխատանքի պատճառով իրավախախտումների մասին վարչական մարմինների կողմից ուղարկված առաքանիները պատշաճ կերպով չեն հանձնվում դրանց հասցեատերերին: Դրա արդյունքում շատ հաճախ ՀՀ քաղաքացիների գործերը ապօրինի կերպով հայտնվում են ՀՀ ԱՆ ԴԱՀԿ-ում, եւ նրանց կողմից նույնպես ապօրինի կերպով՝ առանց պատշաճ ուսումնասիրության, իրականացվում են հարկադիր կատարման գործողություններ, այդ թվում՝ անձնական հաշիվների ու անձնական գույքի կալանքներ ու ապօրինի գանձումներ,
- ՀՀ փոստային բաժանմունքների աշխատակիցների կողմից խսպառ խախտվում են **ՀՀ ՎԻՎՕ 283 հոդվածի դրույթներին համապատասխան պատշաճ կերպով ծանուցման պահանջները: Այդ փաստերի կապակցությամբ առնվազն 3 դեպքով մեր կազմակերպությունը բողոքարկել է ՀՀ ՃՈ ակտերը եւ դրանցից մեկով հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան, որը հայցը ընդունել է վարույթի,**
- Իրավակիրառ պրակտիկայում [www.azdarar.am](http://www.azdarar.am) կայքում իրավախախտումների վերաբերյալ որոշումների տեղադրումը համարվում է պատշաճ ծանուցում: Այսպես, ՀՀ ՎԻՎՕ 283 հոդվածով սահմանված է «Եթե անձի (որին ուղարկվել է որոշումը) հայտնաձեռնված հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) որոշումը և **ստորագրել հրաժարվելու մասին**, ապա որոշումն ուղարկվում է այդ անձի հաշվառման հասցեով (եթե անձի հայտնաձեռնված հասցեն տարբերվում է նրա հաշվառման հասցեից) և **տեղադրվում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:** Այն դեպքերում, երբ որոշումն ուղարկվում է անձի հաշվառման հասցեով և տեղադրվում Հայաստանի Հանրապետության **հրապարակային**

**ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, որոշումը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված) որոշումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ օրը:»**,

- այդ նույն իրավակարգավորումը սահմանվում է ՀՀ ՎԻՎՕ նոր նախագծի համապատասխան հոդվածով, որտեղ նշվում է. «... Եթե փոստով ուղարկված փաստաթուղթը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը **հրաժարվել է** ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) փաստաթուղթը եւ **ստորագրել հրաժարվելու մասին, ապա փաստաթուղթը տեղադրվում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում**: Այն դեպքերում, երբ փաստաթուղթը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, **փաստաթուղթը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված) փաստաթղթի մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը**: Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նախատեսված դիմումի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելու հետ մեկտեղ փաստաթուղթը եւս մեկ անգամ ուղարկվում է դիմումում մատնանշված հեռահաղորդակցության միջոցով:»
- վերոհիշյալի կապակցությամբ հարկ է նշել, որ **քաղաքացու հանրապետությունից բացակայելու դեպքերում** պարզապես անհնար է նրանց կողմից այդ պատվիրված նամակը ստանալը եւ **ստորագրելը դա ստանալուց հրաժարվելու մասին, ինչպես նշված է քննարկվող հոդվածում**,
- այդուհանդերձ, վերոհիշյալ կետում բերված ՀՀ ՎԻՎՕ 283 հոդվածի եւ ՀՀ ՎԻՎՕ նոր նախագծի 133-րդ հոդվածի **իրավանորմը համարում ենք հակասօրինական, ավելին՝ հակասահմանադրական՝** հետեւյալ պատճառաբանությամբ.

- այդ իրավանորմի ամրագրումը հետեւանք է այն փաստի, որ «Հայփոստ» ՓԲԸ աշխատանքը հեռու է վերջինիս եւ ՀՀ կառավարության միջեւ կնքված միջազգային պայմանագրում ամրագրված փոստային ծառայությունների մատուցման որակին վերաբերող դրույթներից: Դրա ապացույցներն են քննարկվող հարցի կապակցությամբ ՀՀ քաղաքացիների, այդ թվում՝ մեր, կողմից քննարկվող հարցի կապակցությամբ ներկայացված բողոքներին ի պատասխան նամակները: Դա են ապացուցում նաեւ ՀՀ բազմաթիվ քաղաքացիների նկատմամբ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից կազմված որոշումները հասցեատերերին պատշաճ կերպով չհանձնելու վերաբերյալ բազմաթիվ փաստերն ու բողոքները եւ այդ հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ կողմից հարուցված հարկադիր կատարման վարույթները,
- այդ իրավանորմի գործնական իրականացումը **ենթադրում է**, որ իրավախախտում թույլ տրված անձը **պարտադիր կարգով պետք է ունենա համակարգիչ, բարձր կարգի հեռախոս, ինտերնետային կապ, համակարգչային գիտելիքներ, որպեսզի կարողանա** Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից տեղեկանալ իր իրավախախտման մասին: **Մինչդեռ ոչ ՀՀ սահմանադրությամբ եւ ոչ էլ ՀՀ օրենսդրությամբ այդպիսի պարտավորություն ՀՀ քաղաքացիների նկատմամբ չի սահմանված: Հետեւաբար այդ իրավանորմը ոչ իրավաչափ է ու անվավեր,**

**Վերոհիշյալ համատեքստում ցանկանում ենք ընդգծել, որ ՀՀ օրենսդրությանը համապատասխան ոչ իրավաչափ ու անվավեր իրավանորմը կատարման ենթակա չէ: Հետեւաբար, այդ իրավանորմի հիման վրա ընդունված ակտերը նույնպես առոչինչ են եւ կատարման ոչ ենթակա:**

Հետեւաբար, առաջարկում ենք ՀՀ ՎԻՎՕ նոր նախագծի 133-րդ հոդվածի 5-րդ մասից՝ որպես **հակասահմանադրական իրավանորմ, հանել** հետեւյալ բառերը. «Եթե փոստով ուղարկված փաստաթուղթը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, ապա փաստաթուղթը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Այն դեպքերում, երբ փաստաթուղթը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, փաստաթուղթը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված) փաստաթղթի մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը: Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում նախատեսված դիմումի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելու հետ մեկտեղ փաստաթուղթը ևս մեկ անգամ ուղարկվում է դիմումում մատնանշված հեռահաղորդակցության միջոցով:»,

- 2) ՎԻՎՕ նախագծի մեջ ՀՀ ՔՀԿ-ների կողմից ներկայացված առաջարկությունների չներառումը, դրանց չքննարկումը դրանց ներկայացուցիչների հետ:

**Ըստ այդմ առաջարկում ենք, ՎԻՎՕ նախագծի և Նախագծերի Փաթեթի վերաբերյալ նախկինում և այժմ առաջարկություններ ներկայացրած ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ սեղմ ժամկետում անցկացնել դեմ առ դեմ մասնագիտական քննարկումներ,**

- 3) ՎԻՎՕ նախագծի մեջ ամբողջությամբ չեն իրացվել դրա հիմնավորմամբ սահմանված կարևորագույն հետևյալ նպատակադրումները.

➤ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի կանոններ սահմանելիս, ընդունելի պետք է դիտարկել այն տարբերակը, որ վերջինս լինի հնարավորինս սպառիչ, որ միայն ծայրահեղ դեպքերում անհրաժեշտություն ծագի իրավակիրառ

արակտիկայում կիրառել նաև վարչարարության այլ իրավական աղբյուրները, որպեսզի իրավասու պաշտոնյաները հարկադրված չլինեն յուրաքանչյուր դեպքում անդրադառնալու այն հարցին, թե այս կամ այն հարաբերության կարգավորմանը նվիրված օրենսդրական ակտերից որին կարող են նախապատվությունը տալ և ինչ հիմքերով,

- օրենսդրական ակտերն վերանայել այն կտրվածքով, որպեսզի **վերջիններումս բացառվեն անհարկի կրկնություններն ու հակասությունները, ինչը կնպաստի իրավակիրառ գործունեության բնականոն իրականացմանը:**

4) անիմաստ ենք համարում Նախագծերի փաթեթում առաջարկվող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի շրջանառությունը, քանի որ 2024 թ. ապրիլի 11-ին ընդունվել է «Կատարողական վարույթի մասին» ՀՕ-179-Ն օրենքը, որը գործում է և դրա դրույթներն ուժի մեջ են մտնելու 2025 թ. հուլիսի 1-ից: Ըստ մեզ առաջարկվող փոփոխություններն արդեն լուծում են ստացել այդ օրենքում, իսկ եթե ոչ, ապա պետք է փոփոխություններ նախատեսել «Կատարողական վարույթի մասին» ՀՕ-179-Ն օրենքում,

5) Նախագծերի փաթեթում չեն նախատեսված համապատասխան փոփոխություններ կատարել.

- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որտեղ ակնհայտորեն կան լուրջ իրավական անհամապատասխանություններ (իրավական կոլիզիաներ) ինչպես ՎԻՎՕ գործող և առաջարկվող տարբերակների և ՀՀ այլ օրենսդրական ակտերի հետ,

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում,


6) Անհասկանալի ու ոչ տրամաբանական է առաջարկվող նախագծերի գործողության մեջ դնելու ժամկետը՝ 2024 թ. հուլիսի 1-ը:

Վերոհիշյալը թույլ է տալիս մեզ եզրակացնելու, որ, չնայած ՎԻՎՕ Նախագծի և Նախագծերի Փաթեթում կատարվել են գնահատելի փոփոխություններ ու լրացումներ, այդուհանդերձ **դրանք չեն նպաստելու երկրում ամբողջապես իրացնելու ՀՀ սահմանադրությամբ ֆիզիկական ու իրավաբանական անձանց երաշխավորված իրավունքները՝ պատշաճ վարչարարության, արդար դատաքննության, խտրականության բացառման ուղղությամբ:**

Հետևապես առաջարկում ենք սեղմ ժամկետում իրականացնել մասնագիտական լուրջ քննարկումներ վերոհիշյալ նախագծերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացրած քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, ըստ այդմ լրամշակել նախագծերը և ներկայացնել ՀՀ կառավարությանը:

Հարգանքով եւ արդյունավետ համագործակցության ակնկալիքով,

**Մովսես Արիստակեսյան**



**«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ**

**Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի  
կառավարման խորհրդի նախագահ**